

ՀԱՎԱՍԱՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԲՈՒՆՈՒՆ, ՀԱՏՈՒԿ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՈՉ ՈՔԻ: Թ.ՋԵՖԵՐՍՈՆ

Փաստաբանությունը գրեթե վերջերս էր ձեռք բերել հասուկ արտոնագիր ունեցող և վճարելի դատարանում գրանցված փաստաբանների անհեթեթ և անիմաստ ինստիտուտից, երբ դատաիրավական բարեփոխումների քողի ներքո, այս անգամ՝ Վճարելի դատարանում հավատարմագրված փաստաբանների ինստիտուտի անվան տակ, այն կրկին անգամ պարտադրվեց փաստաբաններին: Մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից նույնպես այն հարված է մեր երկրի շարքային քաղաքացուն, քանի որ նրա համար վճարելի բողոք ներկայացնելը այսուհետև դարձավ գրեթե անմատչելի ու անհասանելի: Հավատարմագրված փաստաբանների ինստիտուտի ներդրմամբ էականորեն նվազելու է հայրենի արդարադատության իրականացման արդյունավետությունը՝ մեծացնելով այս ոլորտում առկա կոռուպցիոն ռիսկերի մակարդակը: Փաստաբանական ինստիտուտի զարգացման ներկա փուլի մյուս խոչընդոտը դատական սանկցիաների ինստիտուտի ներմուծումն էր: Այսուհետև դատավորները, օրենքով նախատեսված սանկցիաների միջոցով, կզսպեն իրենց վստահողներին և իրենց իրավունքների իրականացման համար մինչև վերջ պայքարող փաստաբաններին՝ դրանով իսկ նպաստելով «կանխատեսելի և կառավարելի» փաստաբանների որակական մեծամասնություն կազմող տեսակի զարգացմանը: Այս իրավիճակից դուրս գալու միակ ելքը փաստաբանների ուժեղ և հզոր ինստիտուտ ունենալն է՝ իր պրոֆեսիոնալ ղեկավար անձնակազմով, անձնակազմ, որը կարող է համապատասխան խիզախություն և կամք ցուցաբերել անկախ փաստաբանական ինստիտուտի զարգացման անշրջելիությունը ապահովելու համար:



Ի ԼՐԱՅՈՍ

ՀԱՍԱՐԻ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԸ

Իրավաբանական լրատուն հարցազրույց է անցկացրել ՀՀ Վճարելի դատարանի նախագահ Հովհաննես Մանուկյանի հետ: Հարցազրույցը էջ 4-5-ում:

ՀԱՆԴԻՊՈՒՄ

2007թ.-ի մարտի 29-ին Մոսկվայում տեղի է ունեցել ՀՀ գլխավոր դատախազ Ադվան Հովսեփյանի և ՌԴ գլխավոր դատախազ Յուրի Չայկայի հանդիպումը, որի ընթացքում կողմերը ստորագրել են երկու երկրների դատախազությունների միջև 2007-2009թթ. համագործակցության ծրագիրը: Ծրագրով նախատեսվում է առաջիկա երեք տարիներին համատեղ կազմակերպել գիտագործնական սեմինարներ, կլոր սեղաններ, ՀՀ և ՌԴ դատախազությունների մասնագետների հանդիպումներ՝ փորձի փոխանակման, կադրերի վերապատրաստման, երկու երկրների դատախազությունների աշխատակիցների որակավորումը բարձրացնելու նպատակով:

ՔԿԻ-Ի ԲԱՑՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ

2007թ.-ի մարտի 23-ին տեղի ունեցավ «Կանաձոր» նորակառույց քրեակատարողական հիմնարկի բացումը, որին մասնակցեց ՀՀ արդարադատության նախարար Դավիթ Հարությունյանը:

ՓԱՏԱԲԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2007թ.-ի մարտի 17-ին տեղի է ունեցել ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր ժողովը, որի ընթացքում ընտրվել են խորհրդի և կարգապահական հանձնաժողովի անդամներ: ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի անդամներ են ընտրվել Համազասպուհի Գրիգորյանը, Վահե Գրիգորյանը, Հայաստան Ստեփանյանը, Նիկոլայ Հակոբյանը, Հայկ Հովհաննիսյանը, Կարինե Սարգսյանը, Արա Ջոհրաբեյանը, Մելանյա Առուստամյանը, Սոս Գրիգորյանը, Նիկոլայ Բաղդասարյանը, Հայկ Արմյանը, իսկ կարգապահական հանձնաժողովի անդամներ են ընտրվել Տարոն Միմոնյանը, Գագիկ Մոլոժնյանը, Կարապետ Աղաջանյանը, Արթուր Ալիխանյանը, Ինեսա Պետրոսյանը, Էդուարդ Աղաջանյանը, Լիպարիտ Միմոնյանը, Հենրիկ Բաղդասարյանը և Արա Մաթևոսյանը:

ՍԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄ

Դատարանների նախագահների խորհրդի թիվ 97 որոշմամբ երեք տարածքային՝ Երևանի, Շիրակի, Լոռու մարզերի առաջին ատյանի դատարանների դատավորները մասնագիտացվել են քրեական և քաղաքացիական գործերով:

ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆԱԳԻՐԸ

2006թ.-ի փետրվարի 22-ին՝ ՀՀ Ազգային ժողովի արտահերթ նստաշրջանում, երրորդ ընթերցմամբ ընդունվել է «ՀՀ դատական օրենսգրքին ուժի մեջ մտնելու մասին» օրենքի նախագիծը, որով սահմանվում են արդեն իսկ ընդունված «Դատական օրենսգրքի» դրույթների ուժի մեջ մտնելու ժամկետները: Մասնավորապես, ամրագրվում է, որ օրենսգրքով նախատեսված ՀՀ դատարաններն սկսում են գործել 2008թ. հունվարի 1-ից:

ԶԱՎԱՐՏՎԱԾ ԸՆՅԱՎՈՐ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԸՍՏԱՐ ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻ ԶԱՆԻ ԸՆԴՅԵՐ

Ժամանակակից պայմաններում մեր հասարակության արմատական վերափոխումները բազմաթիվ հակասական գործընթացներ են ծնել սոցիալ-տնտեսական, քաղաքական, ազգային-պետական և իրավական զարգացման բնագավառներում և այսօր արդեն իսկ առաջնային նշանակություն են ձեռք բերում իրավական պետության կայացման, երկրում օրինականության և իրավակարգի կայունացման, քաղաքացիների սահմանադրական իրավունքների ու ազատությունների պահպանման և երաշխավորման, անձի և պետության միջև փոխադարձ պատասխանատվության խնդիրները: Անցումային շրջանում մեր հասարակության մեջ ընթացող անխուսափելի ճգնաժամային երևույթները, սեփականատիրական հարաբերությունների արմատական փոփոխություններն ու այդ ժամանակահատվածին բնորոշ մի շարք այլ երևույթներ հանգեցրեցին հասարակության մեծ զանգվածի կենսամակարդակի կտրուկ անկման ու սոցիալական շերտավորման: Արդյունքում, քաղաքացիների մեծ մասի գիտակցության մեջ այսօր արդեն էականորեն «նստացել» է թույլատրելի և անթույլատրելի, իրավաչափ և ոչ իրավաչափ վարքագծերի միջև գոյություն ունեցող սահմանը, որը նպաստում է իրավախախտումների և հատկապես հանցագործությունների որակական փոփոխմանն ու դրանց սոցիալական բազայի ընդլայնմանը:

Հանցավոր գործունեության շարժառիթները պայմանավորված են ոչ միայն արտաքին (օբյեկտիվ), այլ նաև ներքին (սուբյեկտիվ) գործոններով:

Հանցավորության աճին նպաստող պատճառներն ու պայմանները բազմազան են: Մարդկային հասարակության մշտական ուղեկից այս երևույթի «ծաղկմանը» մեր օրերում հատկապես նպաստում են տնտեսական հարաբերությունների անհամաչափ զարգացումները և դրա հետևանքով հասարակության անհամամասնական բաժանվածությունը սոցիալական տարբեր խմբերի, գործազրկությունը, հասարակության ցածր իրավագիտակցությունը (իրավական գաղափարախոսությունն ու իրավական հոգեբանությունը), իրավական ու բարոյական դաստիարակության անբավարար մակարդակը, ներպետական օրենսդրության անկատարությունն ու ավելորդ լիբերալիզմը, սոցիալ-տնտեսական ներկայիս պայմանները և այլն:

Հասարակության մեջ ընթացող տնտեսական նոր հարաբերությունների և սոցիալական միջավայրի ազդեցության ներքո փոփոխվում է իրավախախտում կատարող անձանց հոգեբանությունը, որն էլ աստիճանաբար հանգեցնում է հանցավոր վարքագծի դրսևորման: Հանցավորությունը այսօր նոր հատկանիշներ և բնորոշ գծեր է ձեռք բերել, այն դարձել է առավել պրոֆեսիոնալ ու կազմակերպված, և այս պայմաններում առավել քան հասունացել է որակապես ու քանակական տեսանկյունից փոփոխված հանցավորության դեմ պայքարի դժվարին գործում իրավապահ մարմինների աշխատանքի արդյունավետության բարձրացման խնդիրը:

Հանցավորության դեմ պայքարի արդյունավետությունը հիմնականում կախված է այն հանգամանքից, թե հանցավոր գործունեության որ փուլում է այն հայտնաբերվել և կանխվել: Այնուհասակ է, որ որքան վաղ են այդ մասին իրազեկվում իրավապահ մարմինները, որքան արագ և համարժեք է լինում հանցագործությունների կանխմանն ուղղված արձագանքը, այնքան քիչ վնաս է պատճառվում հանցավոր գործունեության արդյունքում պետությանը, հասարակությանն ու քաղաքացիների շահերին:

Օրենքով պաշտպանվող շահերին պատճառվող վնասը նվազագույն կլինի, եթե հնարավոր լինի դեռևս հանցավոր մտադրության ձևավորման փուլում կանխել այն:



Մակայն, քանի որ գիտակցության այս կատեգորիային կարելի է արձագանքել միայն այն հայտնաբերելուց հետո, իսկ հանցավոր մտադրության հայտնաբերումը քրեաիրավական հետևանքներ է առաջացնում այն դեպքում, երբ այն իր դրսևորումն է գտնում անձի որոշակի գործողություններում, ապա միանշանակ կարելի է պնդել, որ իրավապահ մարմինների՝ հանցագործությունների կանխարգելմանն ուղղված գործունեության հիմնական ուղադրությունը պետք է սևեռվի նախնական հանցավոր գործունեության վրա:

Գործող քրեական օրենսդրության համաձայն՝ քրեական պատասխանատվության միակ հիմքը հանցանքն է, այսինքն, այնպիսի արարք կատարելը, որն իր մեջ պարունակում է քրեական օրենքով նախատեսված հանցակազմի բոլոր հատկանիշները (ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ հոդված):

Մակայն, հարկ է նկատել, որ ՀՀ քր. օր-ի 33-րդ հոդվածի համաձայն՝ հանցակազմի բոլոր հատկանիշների առկայությամբ արարքը համարվում է ավարտված հանցագործություն: Նույն կերպ է վարվել նաև Ռուսաստանի Դաշնության օրենսդիրը (ՌԴ քրեական օրենսգրքի 8-րդ հոդված): Անխուսափելիորեն հարց է ծագում չավարտված հանցագործության դեպքում քրեական պատասխանատվության հիմքի վերաբերյալ: Քննարկվող հիմնախնդրի վերաբերյալ գրականության մեջ բազմաթիվ կարծիքներ են արտահայտվել: Գիտնականների մի մասը չավարտված հանցագործության համար պատասխանատվության հիմք են դիտարկում այնպիսի արարքի կատարումը, որն իր մեջ պարունակում է չավարտված հանցագործության հատկանիշներ, մյուսներն այդպիսին են համարում մեղավորությամբ հանրորեն վտանգավոր արարք կատարելը, որն իր մեջ հանցակազմի հատկանիշներ է պարունակում:

Մեր կարծիքով, չավարտված հանցագործության համար քրեական պատասխանատվության հիմք կարող է հանդիսանալ այն արարքի կատարումը, որն իր մեջ պարունակում է քրեական օրենսգրքով նախատեսված չավարտված հանցագործության (հանցագործության



նախապատրաստության և հանցավորձի) բոլոր տարրերը: Օրենսդիրը, առաջին անգամ սահմանելով ավարտված հանցագործության բնորոշումը, հիմնականում հաշվի է առել հանցագործության օբյեկտիվ կողմի իրագործման աստիճանը, սակայն հանցավոր արարքի սուբյեկտիվ ուղղվածության, հանցավոր մտադրության իրագործման աստիճանի վերաբերյալ որևէ նշում չի կատարել, ինչը գործնականում հանցագործության ավարտման պահի որոշման հարցում որոշակի դժվարություններ է առաջացնում:

Ցանկացած հանցագործություն զարգացման որոշակի փուլեր է անցնում, սակայն բոլորովին պարտադիր չէ, որ ցանկացած հանցագործության մեջ առկա լինեն միաժամանակ բոլոր փուլերը: Կամ հանցավոր գործունեության զարգացման երկու փուլեր, որոնք անվերապահորեն պետք է առկա լինեն բոլոր հանցագործություններում. դրանք են հոգեբանական վերաբերմունքի ձևավորումը, որը պարտադիր կերպով նախորդում է հանցավոր վարքագծին, և արարքը, որը վնաս է պատճառում հասարակական հարաբերություններին, կամ այդպիսի վնասի պատճառման համար պայմաններ է ստեղծում, կամ այդ հարաբերությունները կանգնեցնում է այդպիսի վնասի պատճառման վտանգի առջև: Հանցավոր գործունեության մյուս փուլերը կամ գոյություն ունեն հանցագործություններում կամ դրանք բացակայում են:

«Ուղղակի, նախապես ձևավորված դիտավորությամբ կատարվող հանցագործությունների փուլերը ավանդաբար սկիզբ են առնում հանցավոր մտադրության ձևավորումից: Հանցավոր մտադրության ձևավորումը, որպես կանոն, հանցագործության ինքնուրույն փուլ չի դիտարկվում, քանի որ նման գործունեության մասին որևէ մեկը դեռ իմանալ չի կարող»: Այն ամենը, ինչ արարքի (գործողության կամ անգործության) ձևով չի դրսևորվում, գտնվում է քրեաիրավական կարգավորման ոլորտից դուրս: Մեր կարծիքով, այս տեսակետը լիովին արդարացված է, իսկ խոսելով հանցավոր մտադրության ծագման մասին՝ մենք նկատի ունենք անձի հակասոցիալական վերաբերմունքը համապատասխան հասարակական հարաբերությունների նկատմամբ, որն իր հետագա դրսևորումն է գտնում սոցիալական առումով բացասական շարժառիթների, նպատակի և մեղքի մեջ:

Այս կամ այն գործելակերպն ընտրելիս անհրաժեշտ է, որ անձը նպատակադրված որոշում կայացնի, առկա լինեն մեղքը, շարժառիթը, որոնք ճիշտ որոշելը, մի շարք դեպքերում, բավականին կարևոր է լինում, քանի որ հնարավոր չէ առանց շարժառիթի և նպատակի պարզել կատարված արարքի հասարակական վտանգավորության աստիճանը: Իսկ մեղքը քրեական իրավունքի հիմնարար ինստիտուտներից է, որի պարտադիր առկայության հետ է կապվում ընդհանրապես հանցագործության փաստը, և պատահական չէ, որ հանցագործության հասկացության օրենսդրական ձևակերպման մեջ այն դիտարկվում է որպես հանցագործության պարտադիր հատկանիշ: Այնուամենայնիվ, քանի դեռ անձի մոտ ձևավորված հանցավոր մտադրությունը նրա որոշակի վարքագծի միջոցով կյանքի չի կոչվել և սուբյեկտն այդ մտադրության իրագործման ուղղությամբ կոնկրետ գործողություններ (անգործություն) չի ձեռնարկել, նրա մոտ ձևավորված այս գոտ սուբյեկտիվ կատեգորիան քրեաիրավական գնահատականի արժանանալ չի կարող:

Այն, ինչը դրսևորված չէ արարքի (գործողության, անգործության) մեջ, դուրս է քրեաիրավական կարգավորման ոլորտից և չի կարող քրեական պատասխանատվություն առաջ բերել: Այսպիսով՝ հանցավոր մտադրության հայտնաբերումը, որն իր արտացոլումը չի գտել հանրորեն վտանգավոր արարքի մեջ, քրեական պատասխանատվություն չի առաջացնում:

Այն ժամանակահատվածը, որն ընկած է դիտավորության առաջացման և դրա վերջնական իրագործման պահի միջև, տարբեր կարող է լինել: Բնչպես արդեն վերը նշեցինք՝ դիտավորությունն ինքնին պատժելի չէ և նշանակություն ունի միայն արարքը որակելիս՝ որպես դրա վերջնական նպատակ: Այդ իսկ պատճառով պատասխանատվությունը հնարավոր է միայն հանցավոր մտադրության իրագործ-

մանն ուղղված գործողությունների (անգործության) համար, որոնք օբյեկտին վնաս պատճառելու ռեալ վտանգ են առաջացնում: Այսպիսի գործողությունները թերևս պայմանականորեն կարելի է բաժանել հանցագործության կատարման երկու փուլերի՝ հանցագործության նախապատրաստության և հանցավորձի, որոնք դիտավորյալ հանցագործության կատարման պարտադիր փուլեր չեն հանդիսանում:

Դիտավորյալ հանցագործության, ինչպես և անձի ցանկացած գիտակցական արարքի անմիջական աղբյուրը հանդիսանում է սուբյեկտիվ կամային ակտը, այսինքն անձի վճռականությունը՝ կատարել որոշակի գործողություններ (գործողություն) կամ հրաժարվել որոշակի գործողությունների կատարումից (անգործություն): Ավարտված հանցագործության բնորոշման մեջ սուբյեկտիվ հատկանիշի ընդգրկումը հնարավորություն կտա հանցավորձը սահմանազատել ավարտված հանցագործությունից, այսինքն, այնպիսի հանցագործությունից, որի կատարմանն ուղղված դիտավորությունն ամբողջությամբ իրագործվել է:

Չավարտված հանցագործության էությունը կայանում է նրանում, որ դրա կատարման ժամանակ չի ավարտվում հանցագործության օբյեկտին վնաս պատճառելու գործընթացը, այսինքն, չի խախտվում քրեական օրենքի կողմից տվյալ հանցագործությունից պաշտպանվող հասարակական հարաբերությունների ամբողջականությունը, և լիովին կամ մասնակի չի իրագործվում հանցակազմի օբյեկտիվ կողմը, որի հատկանիշները նկարագրված են ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասի այս կամ այն հոդվածի դիսպոզիցիայում:

Չավարտված հանցագործությունների որակումը գործնականում, որպես կանոն, դժվարություններ է առաջացնում այն պարզ պատճառով, որ մի շարք դեպքերում բացակայում է հանցագործության նախապատրաստության և հանցավորձի, հանցավորձի և կամովին անավարտ թողնված հանցագործության միջև գոյություն ունեցող սահմանը:

Չավարտված հանցագործության հակաիրավական բնույթը և պատժելիությունը բնութագրվում է առաջին հերթին բացառապես իրեն բնորոշ ուղղակի դիտավորությամբ: Այդպիսիք չեն կարող կատարվել ոչ անգոյությունամբ և ոչ էլ անուղղակի դիտավորությամբ, քանի որ, եթե հանցագործություն կատարող անձը չի ցանկանում հանրորեն վտանգավոր հետևանքների վրա հասնելը, ապա չի կարող պատրաստվել դրան ուղղված արարքի կատարմանը կամ այդպիսի փորձ կատարել: Հարկ է նշել, որ այս տեսակետը գերիշխում է քրեական իրավունքի տեսության մեջ և միաժամանակ ընդունելի է համարվում քննչական և դատական պրակտիկայում:

Անձի կամքից անկախ գոյություն ունեցող կամ առաջացող հանգամանքները, որոնք խոչընդոտում են հանցավորի մտադրության վերջնական իրագործմանը, կարող են տարաբնույթ լինել և տարբեր կերպ ազդել չավարտված հանցագործության հասարակական վտանգավորության աստիճանի վրա և արդյունքում անդրադառնալ նաև դատարանի կողմից անձի նկատմամբ պատիժ սահմանելու գործընթացի վրա:

Գործնականում չավարտված հանցագործությունների որակման ժամանակ անհրաժեշտ է յուրաքանչյուր դեպքում ճիշտ գնահատել ոչ միայն հանցավոր գործունեությունն ավարտին չհասցնելու, այլ նաև հանցագործությունից կամովին հրաժարվելու շարժառիթները, քանի որ այդ հրաժարումը կարող է հարկադրված լինել, սակայն սուբյեկտի կողմից ներկայացվել որպես կամովին՝ քրեական պատասխանատվությունից և պատժից խուսափելու նպատակով:

ԼԻԼԻՔ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀՀ գլխավոր դատախազության դատարաններում քրեական գործերով մեղադրանքի պաշտպանության վարչության դատախազ, իրավաբանական գիտությունների թեկնածու, ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի դասախոս

ԸՇ ԴԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՊԵՏԵ Է ԼԻՆԻ

ԱՆԿԱՆ, ԱՐԴԱՐ, ՎՍՏԱՐԵԼԻ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍԵԼԻ

-Պարոն Մանուկյան, չե՞ք կարծում, որ դատաիրավական բարեփոխումների շրջանակներում վերջերս կատարված նորամուծությունները՝ ՀՀ Վճռաբեկ դատարանում փաստաբանական գործունեություն իրականացնելու հետ կապված սահմանափակումներ մտցնելը, դատական նիստին ներկա գտնվողների, այդ թվում՝ փաստաբանների նկատմամբ սանկցիաներ կիրառելու նոր լիազորություններով դատավորներին օժտելը, ի վերջո դժվարացնելու է արդարադատության իրականացումը, խոչընդոտելու է մրցակցության սկզբունքի ազատ իրականացմանը, ինչպես նաև հարվածելու է դեռևս ամուր հիմքերի վրա չկանգնած փաստաբանական անկախ ինստիտուտին: Խնդրում ենք այս առումով հայտնել Ձեր տեսակետը:



-Ոչ, չեմ կարծում: Նշված դատաիրավական բարեփոխումների հիմնական նպատակն է բարձրացնել արդարադատության արդյունավետությունը: Հավատարմագրված փաստաբանների կողմից վճռաբեկ բողոք ներկայացնելն ինքնին ենթադրում է ավելի լուրջ իրավաբանական և մասնագիտական մոտեցումներ, և, թերևս, վճռաբեկ բողոքի որակից է նաև կախված Վճռաբեկ դատարանի սահմանադրական առաքելության արդյունավետությունը, քանի որ, ինչպես գիտենք, ՀՀ Վճռաբեկ դատարանը գործերը քննում է բողոքի հիմքերի սահմաններում, և որքան այդ հիմքերը լինեն պատճառաբանված և վեր հանեն իրավական խնդիրները, այնքան վճռաբեկ դատարանին ավելի հեշտ կլինի ապահովել օրենքի միատեսակ կիրառությունը: Ընդ որում, «որակով» վճռաբեկ բողոքը ենթադրում է դրանում պարունակվող իրավական հարցին դատարանի կողմից առավել մանրամասն անդրադարձ և ավելի մանրակրկիտ կանոնակարգում, որը, բնականաբար, ունի իր հետևանքը, մասնավորապես, արդարադատության արդյունավետության բարձրացման և դատական համակարգի կանխատեսելիության տեսանկյունից, ինչը կոռուպցիոն ռիսկերի նվազեցման լուրջ նախապայման է: Ինչ վերաբերում է դատական սանկցիաների ինստիտուտի ներմուծմամբ մրցակցության սկզբունքի ազատ իրականացմանը խոչընդոտելուն, ապա ես չեմ կիսում Ձեր մտավախությունը, քանի որ այդ ինստիտուտը երաշխիք կլինի հենց հիշյալ սկզբունքի իրականացման համար այն պարզ պատճառով, որ մեկ կողմի դատավարական իրավունքների չարաշահումը լուրջ խոչընդոտ է մյուս կողմի դատավարական իրավունքների իրականացման տեսանկյունից, և թերևս դատական սանկցիաները կապահովեն կողմերի իրավահավասարության սկզբունքի լիարժեք կիրառումը: Առանձին դեպքերում այդ ինստիտուտի առկայությունն, ինքնին, կխթանի փաստաբանական ինստիտուտի կայացմանը և արդյունավետության բարձրացմանը:

-Դատաիրավական բարեփոխումների արդյունքում, ի վերջո, ո՞րն է լինելու ՀՀ Վճռաբեկ դատարանի հիմնական դերը:

-ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ բարձրագույն դատական ատյանը ՀՀ Վճռաբեկ դատարանն է, որը կոչված է ապահովելու օրենքի միատեսակ կիրառությունը: Վճռաբեկ դատարանի սահմանադրական առաքելությամբ էր պայմանավորված ՀՀ Վճռաբեկ դատարանի դատավարական նոր կարգավիճակը, մասնավորապես, վճռաբեկության թույլատրելիության համակարգին անցումը և Վճռաբեկ դատարանի լիազորությունների ընդլայնումը: Վճռաբեկ դատարանը հանդիսանում է նաև իշխանության ինքնուրույն ճյուղի՝ դատական իշխանության բարձրագույն մարմինը, և օրենքի միատեսակ կիրառման խնդիրը Սահմանադրությամբ հատուկ առանձնացնելը վկայում է ՀՀ Վճռաբեկ դատարանի հատուկ տեղի մասին պետական իշխանության մարմինների

համակարգում: ՀՀ Վճռաբեկ դատարանի գործառույթն արդարադատության իրականացումն է, որի ընթացքում էլ ՀՀ Վճռաբեկ դատարանը լուծում է ՀՀ Սահմանադրությամբ իր առջև դրված՝ օրենքների միատեսակ կիրառության խնդիրը, իսկ ՀՀ Վճռաբեկ դատարանին օրենսդրի կողմից վերապահված լիազորություններն ուղղակիորեն ուղղված են նշված խնդրի լուծմանը: Այսինքն՝ կարելի է եզրակացնել, որ վճռաբեկ բողոք բերելու օրենսդրական հիմքերը կոչված են կատարելու այն գոտիի դերը, որոնց օգնությամբ Վճռաբեկ դատարանը հնարավորություն ունի ընտրել միայն այն բողոքները, որոնք նախ բացառիկ են և հետո կապված են օրենքի միատեսակ կիրառության ապահովման հետ:

-Որո՞նք են ՀՀ դատական համակարգի հրատապ լուծումներ պահանջող հիմնախնդիրները, այս համատեքստում ի՞նչ է այսօր արվում դատարանների գործունեության թափանցիկության ապահովման համար, և ինչպե՞ս եք վերաբերվում դատարանների գործունեության թափանցիկության ապահովման աջակցմանը ուղղված մասնագիտական հասարակական կազմակերպությունների հետ հնարավոր համագործակցությանը:

-Դատական համակարգը գնում է բարեփոխումների ուղղությամբ, և այդ բարեփոխումները ենթադրում են փուլային լուծումներ: Ինչ վերաբերում է թափանցիկությանը, ապա դատարանների գործունեության թափանցիկության ապահովման առումով ՀՀ դատական օրենսգրքով նախատեսվել են այդ հարցի վերաբերյալ առանձնահատուկ բովանդակություն պարունակող նորմեր, մասնավորապես, դատական իշխանության պաշտոնական կայքի վերաբերյալ դրույթ, համաձայն որի՝ օրենսգրքով նախատեսված տեղեկատվությունը կայքում զետեղվում է հանրության համար հասանելի ձևով, ինչպես նաև դատական ակտերի հրապարակումը նախատեսող նորմ, ըստ որի՝ ՀՀ Վճռաբեկ դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտերը ենթակա են պարտադիր հրապարակման Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում, ինչպես նաև դատական



իշխանության պաշտոնական ինտերնետային կայքում: Բացի այդ՝ ՀՀ դատական դեպարտամենտն այսօր իրականացնում է տարբեր ծրագրեր, որոնք ուղղված են լինելու հենց դատական համակարգի թափանցիկության ու մատչելիության ապահովմանը, և այդ առումով բարձր է գնահատվում հասարակական կազմակերպությունների ներգրավվածությունը այդ աշխատանքներում, քանի որ նրանց միջոցով հնարավորություն կընձեռնվի դատական համակարգին արձանագրելու և որոշելու հանրության պահանջները, դրանց ծավալները և այլն:

-Ըստ Ձեզ, մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից ներկայումս արդյո՞ք արդյունավետ է իրականացվում արդարադատությունը ՀՀ-ում, մասնավորապես, ՀՀ Վճռաբեկ դատարանում:

-Այո: Այդ նպատակով Ձեզ եմ նվիրում ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումների ժողովածուի առաջին հատորը (ի դեպ, որի շնորհանդեսը կկայանա 2007 թվականի ապրիլի 2-ին, ժամը 11-ին), որում առկա որոշումները Ձեր հարցին ուղղակիորեն պատասխան կտան:

Ե՛վ մարդու իրավունքների պաշտպանության, և՛ օրինականության տեսանկյունից, կարծում եմ, որ դատավարության մասնակիցների, ինչպես նաև դատարանների կողմից այդ որոշումների կյանքի կոչելը շատ կարևոր է օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու համար: Այս հանգամանքը կունենա լուրջ հետևանք արդարադատության արդյունավետության, իրավունքների պաշտպանության, իրավական որոշակիության, դատարանների մատչելիության առումով:

-Ինչպիսի՞ն կցանկանաք տեսնել Հայաստանի դատական համակարգի վարկա պատկերը, և արդյո՞ք այսօր Ձեր կողմից ներդրվում է ամբողջ ներուժը այն ավելի արդար, անկախ և վստահելի դարձնելու համար:

-Փորձեմ պատասխանել հակիրճ, մի շարք սկզբունքների վկայակոչմամբ՝ անկախ, արդար, վստահելի և կանխատեսելի: Ինչ վերաբերում է այդ ուղղությամբ իրականացվող ջանքերին, ապա դրա գնահատականը կտա հասարակությունը:

-Արդյո՞ք կան խնդիրներ, որոնք այս հասցազրույցում չարժարժվեցին, սակայն որոնց դուք կցանկանայիք անդրադառնալ:

-Կոչ եմ անում բոլոր հասարակական կազմակերպություններին և հանրությանն ընդհանրապես, որ դատական համակարգն արդյունավետ տեսնելու համար յուրաքանչյուրն իր հերթին պետք է իր ներդրումն ունենա, քանի որ դատական համակարգը միշտ կլինի այնպիսին, ինչպիսին մենք ցանկանում ենք նրան տեսնել, և գործուն քայլեր իրականացնել կամ չիրականացնելը հետևանք կլինի այնպիսի դատական համակարգ ունենալուն, որը մենք ցանկանում ենք այսօր: Ընդ որում, ինչքան մեծ լինի հասարակության ներդրումն այս գործում, այնքան ավելի արդյունավետ դատական համակարգ կարող ենք ակնկալել:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՌՈՐՅԱ

Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիան շարունակում է նոր սերնդի իրավաբանների գիտակրթական մակարդակի բարձրացմանն ուղղված իր գործունեությունը: Այդ նպատակով Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի ներկայացուցիչները հանդիպումներ են ունեցել հայաստանյան մի շարք բուհերի իրավագիտության ֆակուլտետների ուսանողների հետ: Հանդիպումների ընթացքում Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի ներկայացուցիչները իրավաբան ուսանողներին են ներկայացրել ասոցիացիայի առաքելությունը, գործունեությունը և միջոցառումները: Հանդիպումների ընթացքում ակտիվ և շահագրգիռ քննարկումներ են տարվել իրավունքի ոլորտում ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային մակարդակում առկա տեսական ու պրակտիկ որոշ խնդիրների շուրջ: Քննարկումները հնարավորություն են տվել պարզել նոր սերնդի իրավաբանների կարծիքը քննարկվող հարցերի վերաբերյալ և վեր հանել նոր մոտեցումներ ու առկա խնդիրների լուծման նոր տարրերակներ: Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի ներկայացուցիչների հանդիպումները իրավաբան ուսանողների հետ շարունակվում են, և առաջիկա այցելությունների շարքում ընդգրկված են նաև մարզային բուհերը, որոնց ուսանողները հավասարապես, ինչպես երևանյան բուհերի ուսանողները, գտնվում են Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի ուշադրության կենտրոնում:



ԿԱՆԱՆՑ ԵՎ ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎԱՆՎԱՍԱՐԻԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՓՈՐՁ

Հավասարությունը մարդու հիմնարար և կարևորագույն իրավունք է: Այն ամրագրված է մարդու իրավունքների վերաբերյալ բոլոր միջազգային համաձայնագրերում: Հակառակ տիրող կարծիքների՝ գենդերային քաղաքական հավասարությունը չի վերաբերվում միայն կանանց: Բացառապես միայն կանանց կամ միայն տղամարդկանց քաղաքական բնույթի հարցերի վրա կենտրոնանալու փոխարեն, գենդերային քաղաքական հավասարությունն առնչվում է քաղաքական ոլորտներում թե՛ կանանց, և թե՛ տղամարդկանց անհավասարության դրսևորումներին: Գենդերային քաղաքական հավասարությունը ենթադրում է կանանց և տղամարդկանց հավասար պայմանների ապահովում՝ իրենց քաղաքական իրավունքներից օգտվելու համար: Այն նաև նպատակ ունի կանանց և տղամարդկանց համար հավասար հնարավորություններ ստեղծել՝ հասարակության քաղաքական զարգացմանը մասնակցելու և այդ



զարգացման արդյունքներից հավասարապես օգտվելու առումով: Որոշումների կայացման բարձր մակարդակներում իրենց շահերը ներկայացնելու կանանց անկարողությունը հանգեցնում է այն բանին, որ բազում կարևոր հարցեր մնում են չլուծված: Քաղաքական որոշումների կայացման գործընթացում կանանց բացակայությունը հասարակության զգալի մասին թույլ չի տալիս օգտվել քաղաքական ոլորտների քաղաքականությանը մասնակցելու իրենց իրավունքից: Այս տեսանկյունից հետաքրքիր է դիտարկել կանանց և տղամարդկանց քաղաքական իրավահավասարության միջազգային իրավական փորձը:

Ունիվերսալ բնույթի միջազգային իրավական չափորոշիչներից գլխավոր տեղը գրավում է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, որը սահմանում է, որ յուրաքանչյուր ոք իրավունք ունի անմիջականորեն կամ ազատ ընտրված ներկայացուցիչների միջոցով մասնակցելու իր երկրի կառավարմանը: Հռչակագրում նաև սահմանվում է, որ իր իրավունքներն ու ազատություններն իրականացնելիս յուրաքանչյուր ոք պարտավոր է ենթարկվել միայն այնպիսի սահմանափակումների, որոնք օրենքով սահմանված են բացառապես մյուսների իրավունքների ու ազատությունների պատշաճ ճանաչումն ու հարգումն ապահովելու և ժողովրդավարական հասարակարգում բարոյականության արդարացի պահանջները, հասարակական կարգը և ընդհանուր բարեկեցությունը բավարարելու նպատակով: Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը ընդունվել է ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 1948 թվականի դեկտեմբերի 10-ի 217 Ա (III) բանաձևի համաձայն:

1953թ.-ի մարտի 31-ին Նյու Յորքում ստորագրված և 1954թ.-ի հուլիսի 7-ին ուժի մեջ մտած «Կանանց քաղաքական իրավունքների մասին» կոնվենցիան սահմանում է բոլոր ընտրություններում կանանց քվեարկելու իրավունքը, ազգային օրենսդրությամբ սահմանված հանրորեն ընտրովի մարմիններում կանանց ընտրվելու իրավունքը, հասարակական պետական մարմիններում առանց որևէ խտրականության, տղամարդկանց հետ հավասար պայմաններով պաշտոններ զբաղեցնելու կանանց իրավունքը: Սույն կոնվենցիան ՀՀ-ում ներկայումս գտնվում է վավերացման փուլում:

«Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագիրը, որն ընդունվել է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1966թ.-ի դեկտեմբերի 16-ի 2200 Ա (XXI) բանաձևի համաձայն և ուժի մեջ է մտել 1976թ.-

ի մարտի 23-ին, մասնակից երկրներին պարտադրեց տղամարդկանց և կանանց համար ապահովել հավասար իրավունքներ և հնարավորություններ՝ օգտվելու բոլոր քաղաքացիական և քաղաքական իրավունքներից, մասնավորապես.

- մասնակցելու պետական գործերը վարելուն՝ ինչպես անմիջականորեն, այնպես էլ ազատորեն ընտրված ներկայացուցիչների միջոցով,
- քվեարկել և ընտրվել իսկական պարբերական ընտրություններում, որոնք անց են կացվում համընդհանուր և հավասար ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ և ապահովում են ընտրողների կամքի ազատ արտահայտումը,
- իր երկրում հավասարության ընդհանուր պայմաններով մտնելու պետական ծառայություն:

«Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագիրը Հայաստանի համար ուժի մեջ է մտել 1993թ.-ի սեպտեմբերի 23-ից:

ՄԱԿ-ի 1979թ.-ի «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիան մասնակից պետություններին պարտադրում է ձեռնարկել համապատասխան միջոցներ, ներառյալ օրենսդրական, բոլոր բնագավառներում, մասնավորապես, քաղաքական, սոցիալական, տնտեսական և մշակութային բնագավառներում կանանց համակողմանի զարգացումը և առաջադիմությունը ապահովելու համար, այն հաշվով, որպեսզի նրանց համար երաշխավորվեն մարդու իրավունքների և հիմնական ազատությունների իրականացումը և դրանցից օգտվելը տղամարդկանց հետ հավասարության հիման վրա:

Նույն կոնվենցիան մասնակից պետություններին պարտադրում է նաև ձեռնարկել բոլոր համապատասխան միջոցները երկրի քաղաքական և հասարակական կյանքում կանանց նկատմամբ խտրականության վերացման ուղղությամբ, մասնավորապես՝ ապահովել տղամարդկանց հետ հավասար պայմաններով կանանց իրավունքը.

- քվեարկելու բոլոր ընտրություններում և հրապարակային հանրաքվեներում և ընտրվելու բոլոր



հրապարակայնորեն ընտրվող մարմիններում,

- մասնակցելու կառավարության քաղաքականության ձևավորմանը և իրականացմանը և զբաղեցնելու պետական պաշտոններ, ինչպես նաև՝ իրականացնելու բոլոր պետական գործառնությունները պետական կառավարման բոլոր մակարդակներում,
- մասնակցելու երկրի հասարակական և քաղաքական կյանքի հիմնահարցերով զբաղվող ոչ կառավարական կազմակերպությունների և ընկերությունների գործունեությանը:

«Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիայի 4-րդ հոդվածը սահմանում է. «Մասնակից պետությունների կողմից տղամարդկանց և կանանց միջև փաստական հավասարության սահմանման արագացմանն ուղղված՝ ժամանակավոր հատուկ միջոցների ընդունումը չի համարվում խտրական, ինչպես դա սահմանվում է սույն Կոնվենցիայով, սակայն այն ոչ մի կերպ չպետք է հանգեցնի անհրավահավասար կամ շեղումներով չափորոշիչների պահպանմանը, այդ միջոցները պետք է վերացվեն, երբ ձեռք բերվեն հնարավորությունների և իրավահավասար վերաբերմունքի նպատակները»: Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիային Հայաստանը միացել է ՀՀ Գերագույն խորհրդի 1993թ.-ի հունիսի 9-ին որոշմամբ:

Ըստ «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիայի կամընտիր արձանագրության, որը ստորագրվել է 1999թ.-ի հոկտեմբերի 6-ին Նյու Յորքում՝ մասնակից պետությունները ստանձնել են հետևյալ պարտավորությունները.

- ընդունել Կոմիտեի իրավասությունը՝ ընդունելու և քննարկելու Մասնակից պետության իրավագրության ներքո գտնվող անհատների կամ անհատների խմբերի կողմից կամ նրանց անունից ներկայացված հաղորդագրությունները՝ Մասնակից պետության կողմից «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիայում նշված իրենց իրավունքների ոտնահարման վերաբերյալ,
- Արձանագրության 6-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված դեպքերում 6 ամսվա ընթացքում գրավոր բացատրություններ կամ հայտարարություններ ներկայացնել Կոմիտեին՝ պարզաբանելով խնդիրը և դրան տրված լուծումները, եթե այդպիսիք եղել են,
- Արձանագրության 7-րդ հոդվածով նախատեսված դեպքերում ուսումնասիրել Կոմիտեի տեսակետներն ու առաջարկությունները և 6 ամսվա ընթացքում գրավոր պատասխան ուղարկել,
- Արձանագրության 8-րդ հոդվածով նախատեսված դեպքերում 6 ամսվա ընթացքում իր դիտարկումները ներկայացնել Կոմիտեին,
- ձեռնարկել բոլոր համապատասխան քայլերը, որպեսզի երաշխավորի, որ իր իրավասության ներքո գտնվող ոչ մի անձ չենթարկվի վատ վերաբերմունքի կամ ահաբեկման՝ Արձանագրության համաձայն հաղորդագրություն ուղարկելու պատճառով,
- հանրությանը ծանոթացնել և հասարակական հնչեղություն տալ Կոնվենցիային ու Արձանագրությանը, դյուրացնել իրեն վերաբերող հարցերում Կոմիտեի տեսակետների ու առաջարկությունների մատչելիությունը:

«Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիայի կամընտիր արձա-

նագրությունը վավերացվել է ՀՀ Ազգային ժողովի 2006թ.-ի մայիսի 23-ի որոշմամբ:

1995թ.-ին Պեկինում կայացած կանանց միջազգային չորրորդ համաժողովի կողմից ընդունվեցին Պեկինյան հռչակագիրը և գործողությունների ծրագիրը, որով վեր հանվեցին մի շարք հիմնախնդիրներ, այդ թվում.

- Անհավասարությունները տղամարդկանց և կանանց միջև իշխանության բաժանման և որոշումների կայացման ոլորտների բոլոր մակարդակներում,
- Կանանց առաջխաղացման մեխանիզմների անհամապատասխանությունը:

Պեկինյան գործողությունների ծրագրում նշվում էր, որ շատ կուսակցություններ և պետական կառույցներ շարունակում են խոչընդոտել երկրի հասարակական-քաղաքական կյանքին կանանց մասնակցությանը: Ավելին, որոշ երկրների օրենսդիր մարմիններում նկատվում է կանանց թվաքանակի նվազում: Գործողությունների ծրագիրը կուսակցություններին առաջարկում է գեղեցիկ հիմնախնդիրը ներառել իրենց քաղաքական ծրագրերում և միջոցներ ձեռնարկել ապահովելու կուսակցությունների ղեկավարման գործում տղամարդկանց հետ հավասար հիմունքներով կանանց մասնակցության համար:

Գործողությունների ծրագիրը կանանց իրավունքների ոլորտի ամենահամապարփակ փաստաթուղթն է, որն ընդգրկում է նախորդ համաժողովների և պայմանագրերի արդյունքները: Պեկինյան հռչակագիրը կոչված էր մինչև 20-րդ դարի վերջը ապահովել Նայրոբի (Քենիա) 1985թ.-ի հռչակագիրը ստորագրած պետությունների կողմից համաձայնեցված ռազմավարության իրականացումը և գործողությունների ծրագրում սահմանված նպատակներին հասնելու համար անհրաժեշտ ռեսուրսների մոբիլիզացումը: Պեկինյան գործողությունների ծրագրի ամփոփումը և գնահատումը կատարվեց ՄԱԿ-ի՝ կանանց կարգավիճակի հանձնաժողովի 49-րդ նիստի ընթացքում՝ 2005թ.-ի փետրվարի 28-ից մարտի 11-ը ընկած ժամանակահատվածում:

Ինչպես երևում է՝ վերը նշված բոլոր միջազգային իրավական փաստաթղթերը պահանջում են իրականացնել կոնկրետ պարտավորություններ, որոնք ուղղված են կանանց օգնալական կարգավիճակի բարձրացման և գեղեցիկ իրական իրավահավասարության ապահովմանը: Այս տեսանկյունից ՀՀ-ը վավերացրել է գեղեցիկ ուղղվածության գրեթե բոլոր միջազգային իրավական ակտերը: Սակայն այն դեռևս չի հանգեցրել այն փաստին, որ այդ կարևորագույն փաստաթղթերի նորմերը գործնական քաղաքականության մաս կազմեն: Անհրաժեշտ է կիրառել կտրուկ և անընթաց քայլեր կանանց նկատմամբ խտրականության հաղթահարման ուղղությամբ: Հասարակական կյանքի բոլոր բնագավառներում, այդ թվում՝ քաղաքական, հարկավոր է հասնել տղամարդկանց և կանանց հավասարակշռված ներկայացվածությանը:

ԿԱՐԵՆ ԶԱՊՈՅԱՆ

«ԼԻԳԼ ԸԼԱՅԸՆՍ» իրավաբանական ընկերության կառավարող գործընկեր, փաստաբան

ԱՄՆ-ի արդարադատության որոշմամբ կին երդվյալ ատենակալներին թույլատրվում է դատական նիստի ժամանակ զբաղվել ձեռագործով, քանի որ, ինչպես նշված է այդ որոշման մեջ, այն չի կարող անդրադառնալ դատական ընթացքի վրա:

Կալիֆորնիա նահանգի օրենքներով դիմակով դիմակահանդես գնալ ցանկացողը պետք է նախապես ստանա ոստիկանության թույլտվությունը:

Նյու-Յորքում հանցագործություն է համարվում ցուցափեղկում առանց հագուստի մարդապատկեր թողնելը:

Ժողովում այն կինը, որը խանութում փորձում է վեցից ավելի շրջագգեստ, ենթարկվում է բանտարկության:

Վաշինգտոնի նահանգի Վիլբոր քաղաքում այլանդակ ձիով զբոսնողը ստիպված կլինի 300 դոլար վճարել:

Ամենակարճ օրենքը, որն ընդունվել է 1918թ.-ին, կանանց իրավահավասարության մասին օրենք է՝ բաղկացած 27 բառից:

Ոստիկան - Ինչո՞ւ կանգ չառաք, երբ ձեզ ձայն տվեցի:
Վարորդ - Ինձ թվաց, թե դուք ցանկանում եք ասել՝ «Բարև ձեզ, պարոն քաղաքապետ»:

Ոստիկան - Իհարկե, պարոն քաղաքապետ: Ցանկանում էի զգուշացնել, որ առջևում սահուն ճանապարհ է, և անհրաժեշտ է նվազեցնել արագությունը:

Գրենլանդիայում դատարանի առջև կանգնում է հանցագործության մեջ մեղադրվող մի մարդ:

- Իսկ այժմ,- նրան է դիմում դատավորը,- խնդրում եմ բացատրել, թե դուք ինչ էիք անում սեպտեմբերի 11-ի լույս ապրիլի 3-ի գիշերը:

Դատավոր - Ձեր զբաղմունքը:
Կալանավոր - Ակրոբատ, ձերդ գերազանցություն:
Դատավոր - Սերժանտ, խնդրում եմ, պատուհանը փակեք:

- Ինչո՞ւ դուք ձեր մեքենայի մի կողմը ներկում եք կանաչ, մյուսը՝ կարմիր գույնով:

- Նրա համար, որ վկաների ցուցմունքները լինեն հակասական, եթե ես պատահաբար ենթարկվեմ վթարի:

- Ամբաստանյալ, դուք ձեր ամբողջ կյանքում մարդկանց համար մի լավ բան արե՞լ եք,- հարցրեց դատավորը գող կրկնահանցագործին:
- Իհարկե, ձերդ գերազանցություն: Իմ շնորհիվ քսան ոստիկաններ ունեն մշտական աշխատանք:

Խորհրդակցության ժամանակ, դատավճիռ կայացնելուց առաջ.
- Եթե իրոք ամբաստանյալը երկու կին ունի, ապա ինչո՞ւ նրան պատժել: Նա առանց այդ էլ բավականաչափ պատժված է:

- Ես կարծում եմ՝ մեր վարորդին հարկավոր է վռնդել,- ասում է կինը ամուսնուն:
-Նա արդեն չորրորդ անգամն է՝ քիչ էր մնում սպաներ ինձ:
- Դե ինչո՞ւ ես այդքան շտապում: Եկ նրան ուղղվելու մեկ հնարավորություն էլ տանք:

- Ձոն, քեզ ինչի՞ համար եմ նստեցրել:
- Մի դատարկ բանի համար: Ես փոշտացել եմ և պահակն արթնացել է:

Դատավոր - Դուք մեքենա եք գողացել: Ի՞նչ կարող եք ասել ձեզ արդարացնելու համար:
Ամբաստանյալ - Ես այն գտել եմ գերեզմանատանը և կարծել եմ, թե տերը մահացել է:

Դատավոր - Ձեր բոլոր փաստարկները, պարոն Մյուլլեր, անբավարար են այն բանի համար, որ դատարանը համաձայնվի ձեզ ամուսնալուծել: Հաշտվեք ձեր կնոջ հետ:
Ամուսին - Դա շատ խիստ պատիժ է, պարոն դատավոր:

- Երբ մենք ամուսնուս հետ հետ սկսում ենք կռվել,- կատակով ասում է տանտիրուհին հյուրին,- ես երեխաներին ուղարկում եմ մաքուր օդին խաղալու:

- Ի միջի այլոց, ձեր երեխաները հիանալի տեսք ունեն: Ամմիջապես երևում է, որ նրանք հաճախակի են մաքուր օդ շնչում:



- Այդ ճի՞շտ է, որ Ռուդոլֆին նստեցրել եմ:
- Այո:
- Այ քեզ խաբեքա: Իսկ ինձ նա ասաց, թե գնում է եղբոր մոտ կես տարով:
- Նա ճիշտ է ասել: Եղբորն ավելի շուտ էին նստեցրել:

Աթենքի կառավարիչ Սոլոնի օրենքով պետության պաշտոնատար անձինք առաջին անգամ նկատված հարբեցողության համար ենթարկվում էին խոշոր տուգանքի, իսկ երկրորդ անգամ՝ մահապատժի:

Դատավոր -Վերջապես դուք կարո՞ղ եք պարել ազնվորեն:
Ամբաստանյալ -Ի սեր աստծո, ե՞րբ: Չէ՞ որ դուք անընդհատ ինձ բանտ եք նստեցնում:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

Հեռ.՝ (374 10) 54-01-99
Ֆաքս՝ (374 10) 58-02-99
Էլ.փոստ՝ legalnewsletter@ayla.am

Լրատվական գործունեություն իրականացնող՝

«Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿ

Հասցե՝ ք. Երևան,
Նալբանդյան 7, բն. 2

Պետական գրանցման վկայականի համարը՝
03Ա 057970, տրված՝ 27.12.2002 թ.

Թողարկման պատասխանատու և խմբագիր՝
Նարինե Կարապետյան

«ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԼՐԱՏՈՒՆ» ՏԱՐԱԾԿՈՒՄ Է ԱՆՎՃԱՐ

Տպաքանակը՝ 500 օրինակ
Ծավալը՝ 1 տպ. մամուլ
Ստորագրված է տպագրության
30.03.2007թ.

Տպագրվում է 2006թ. հունիսից